ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N 01/15026-2024

"08" հուլիս 2024թ.

ՀՀ, 0046, Երևան, Շենգավիթ, Արարտյան 26
(374-10) 65-05-53, Էլ. փոստ՝ info@hlib.am

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 310524-806 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և հաշվի առնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեից 2024 թվականի մայիսի 17-ին ստացված թիվ 01/70-2/30799-2024 գրությունը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում 2024 թվականի մայիսի 31-ին հարուցվել է թիվ 310524-806 վարչական վարույթը՝ «ԱՐԵԳ-ԱՐԻԱՆ» ՍՊԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը՝ Տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի մայիսի 31-ի թիվ ՎՎ-0821-Ա հրամանի հիման վրա 2024 թվականի հունիսի 03-ից մինչև 2024 թվականի հունիսի 10-ը ներառյալ Ընկերությունում նախատեսվել է իրականացնել զննում:

Զննում իրականացնելու նպատակով մասնագետները 2024 թվականի հունիսի 03-ին և հունիսի 10-ին այցելել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2024 թվականի հունվարի 05-ին կազմված թիվ 4185080 արձանագրությունում, ինչպես

նաև՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում նշված Ընկերության գործունեության հասցե (քաղաք Երևան, Նորք 2-րդ փողոց, 66 տուն):

Կատարված այցերի ընթացքում պարզվել է, որ Ընկերությունը վերոնշյալ հասցեում փաստացի գործունեություն չի իրականացնում (հիմք՝ 03.06.2024թ. և 10.06.2024թ. արձանագրությունները):

Վարչական մարմինը վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունն ապահովելու նպատակով և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով փոխօգնության կարգով վարչական վարույթին առնչվող՝ Ընկերության գործունեության կարգավիճակի և հասցեների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով 2024 թվականի հունիսի 26-ին դիմել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 2-րդ և 4-րդ մասերը, Տեսչական մարմնում 2024 թվականի մայիսի 31-ին հարուցված թիվ 310524-806 վարչական վարույթի ժամկետը 2024 թվականի հունիսի 28-ի որոշմամբ երկարաձգվել է 30 օրով:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից 2024 թվականի հուլիսի 03-ին ստացված գրությամբ տրամադրվել է տեղեկատվություն, համաձայն որի՝ 2024 թվականի մայիսի 09-ից Ընկերութունն ունի ժամանակավոր դադարեցված կարգավիճակ:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-րդ մասի «գ» կետի համաձայն՝ *վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:*

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արաբկիր 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Վարչական մարմինը գտնում է, որ վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջը՝ Ընկերության տնօրեն Գուրգեն Հայրապետյանին ի հայտ բերելու և վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-րդ մասի «գ» կետը և 4-րդ մասը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 13-րդ ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում 2024 թվականի մայիսի 31-ին հարուցված թիվ 310524-806 վարչական վարույթը կասեցնել՝ մինչև վարչական ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելը, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

2. Սույն որոշումը ենթակա է ծանուցման Ընկերության տնօրեն Գուրգեն Հայրապետյանին, հասցե՝ քաղաք Երևան, Նորք 2-րդ փողոց, 66 տուն, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրման (http://www.azdarar.am) միջոցով:

Восстановимая подпись

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN SLAVIK 3807890467 Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արաբկիրյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107